

ՄԵԼԳՈՆԵԱՆ ՍԱՆՈՒԾ ՄԻՈՒԹԻՒՆ - ԿԻԱՐՈՒ



**Շատ Սիրելի Մելգոնեանցի Զոյրեր եւ Եղբայրներ,
Յարգելի Բարեկամներ**

Ողջոյններ Կիարոսի Մելգոնեան Սանուծ Միութեան կողմէ

Արդեն տարի մը անցած է այդ ճակատագրական պահեն երբ Լոս Անդելոսի եւ Նիկոսիոյ դատարաններու ատեաններէն լսուեցաւ մեր միացեալ ծայնը՝ պահանջելով արդարութիւն հանդեպ մեր ութառուսամեայ Յաստատութեան, որ ոճային արարքով մը զոհը զնաց փակուելու որոշումին. սակայն մենք՝ մեր կողքին ունենալով Պոլսոյ Պատրիարքը եւ համայն հայութեան միաձայն բողոքի կոչք, համարձակեցանք սխալ որոշումի մը դեմ կենալ ու պայքարիլ մինչեւ վերջին շումէ:

Կը գիտակցինք որ դժուար պայքար մըն է մղուածը, եւ առ այդ շատեր ոչ միայն մեզ այպասեցին այլ նաեւ ցայսօր ոչինչ կը խնայեն մեր վարկը նուաստացնելու համար, մեր միացեալ ուժը բաժնելու համար, յանուն իրենց նիւթապաշտ եւ գրեհիկ նկարագրին, արբեցած իրենց խոստացուած նիւթական յատկացումներէն:

Պահն է այսօր զգաստութեան. պահն է այսօր ալեւս ճանչնալու թէ ո՞վ է մելգոնեանցին. թէ ան, որ երկնակամարին տակ ալ գտնուի, երբեք չի կրնար ուրանալ այն բարիքները որոնք փոխանցուած են իրեն բարերարներու կտակին շնորհիւ, ան երբեք չի կրնար մոռնալ այն շերմ մթնոլորտը որ փոխանցուեցաւ իրեն երբ Մելգոնեանը լոկ պատսպարան մըն էր իրեն համար, ուր դասատուներ եւ վաստակաւոր դեկավարներ սէր եւ գուրգուրանք ցուցաբերելով «մելգոնեանցի» ըլլալու արժանաւոր տիտղոսը տուին:

Դժբախտաբար մեր մէջ գոյութիւն ունին նաեւ «սեւ ոչխարներ», նոյնիսկ դաւաճաններ, որոնք գլուխ կը խոնարիեն անոնց առաջ որոնք յանդզնեցան ստորագրել 16 Մարտի մահավճիռը: Մեր մեծերը մեզի սորվեցուցած են թէ մելգոնեանցի ըլլալ կը նշանակէ նաեւ «Ներել» գիտնալ: Այո՛, կը գիտակցինք մեր վեհանձնութեան, պայմանաւ որ մեր դիմաց գտնենք գործակցելու գիտակցութիւնը ունեցող անձեր: Մեր իտեալն է վերականգնել Նոր Մելգոնեանը իր ներկայ վայրի մէջ, որպէս գիշերօթիկ Յաստատութիւն, որ կրկին պիտի կարենայ ապաստանարան մը ըլլալ բոլոր գաղութներէն քաղուած ու ի մի բերած երբներանգ ծաղկեփունչեր, որոնք թրծուելով վեցամեայ հայեցի դաստիարակութեամբ, նոր երոպական միջավայրի մը մէջ եւ ապա վերադառնալով իրենց ծննդավայրերը՝ դառնան մեր վաղուայ փայլու և ու գիտակից դեկավարները:

Կեցցեն Աղա Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեան անմահ ազգանուեր բարերարները, որոնց տեսիլքն ու առաքելութիւնը փոխանցուեցաւ սերունդ սերունդ եւ պիտի տեւէ դարէ դար:

Կեցցեն մելգոնեանցիները, կեցցէ՛ մեր պատմական Յաստատութիւնը:

Նիկոսիա, 14 Յունուար, 2006